№ 11 ԹԷՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏ 20

1896

ԹԷՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՐՏ 20 № 11

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հրատարակւում է ամեն չորեքշաբթի օրերը

Տարեկան գինն է Թէհրանում 12 ղռն. վեցամսեան 6 ղ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղ. վեցամսեան 8 ղ. Ռուսաստան 3 րուբլի. վեցամսեան 2 րուբլի. Օտար երկիրները 8 ֆրանք. վեցամսեան 5 ֆրանք: Հասցէ՝ Téhéran Rédaction ASTCH-AREVELIAN

«ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆԻ» Խմբագրութիւնը բաց է ամեն օր բացի կիրակի եւ տօն օրերն:

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով. իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲԱՑՒԵԼ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ 1896 Թ.

Ա. Տ. „ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ" Ա. Տ.

Բաժանորդագինն է Թէհրանում տարեկան 12 ղռան վեցամսեայ 6 ղ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղռան, վեցամսեայ 8 ղռան: Ռուսաստան տարեկան 3 րուբլի վեցամսեայ 2 ր. Օտար երկիրներ 8 Ֆրանկ վեցամսեայ 5 ֆ. Թէհրանում ձեռքով ծախուածները հատը 6 շահի: բաժանորդագինը կանխիկ է:

Բաժանորդագրութեան համար դիմել ուղղակի խմբագրութեան: Téhéran, Rédaction Astgh-Arevelian.

ԱԶԳ

Նամակներ և թղթակցութիւններ ուղղել հետևեալ հասցէին:

Խմբագրութիւն Աստղ-Արևելեանի՝ Redaction du journal Astgh-Arevelian

Խնդրում ենք այն ամեն պարոններից, որոնք գործ ունին խմբագրութեանս հետ, իրենց նամակները ուղղակի խմբագրութեանս հասցէին ուղղեն և ոչ թէ մասնաւոր անձանց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուսուցչական տագնապը Պարսկաստանում. Հայկական հարց. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մայրենի լեզւի կրթութիւնը. Նամակ խմբագրութեան. Նամակ Դավրէժից, Նամակ Ուշտից. Նամակ Շուշուց. Նամակ Էջմիածնից. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայկական հարց. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. Յայտարարութիւններ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. *Մատիզայի աշխարհում* (Revue des Revues dans le pays de Matiza) *(«Մէր Բօմկ» 896 № 1)*

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՏԱԳՆԱՊԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

—

Պարսկաստանի ամեն կողմերից գալիս են նամակներ, որոնք դառն կերպով գանգատւում են, ուսումնարաններից, նրանց կառավարութեան ձևից և գլխաւորապէս ուսուցիչներից, շատերն էլ արդարացի փաստերով հաստատում են նրանց անմխիթար կացութիւնը, պահանջում են դարման, պահանջում են բարենորոգութիւն: Ամենի հայեացքն էլ գրեթէ հանգում է այն կէտին, որ պէտք է անպատճառ արձակել պաշտօնի գլուխ եղած ուսուցիչներին և նորերը հրաւիրել. սրանից դուրս դարմանի չենք հանդիպում, որքան քրքրում ենք այդ նամակները:

Եթէ խնդիրը կախումն ունենար լոկ նրանից, որ երեկուայ ուսուցիչը պ. Տիգրանն էր, այսօր մի պարոն Սարգիս է հարկաւոր դրա լուծումը հեշտ էր, կը խնդրէինք քահանային, որ նրան մեր ցանկացած անունով մկրտէր, իսկ այդ փոփոխութիւնից եթէ ակնկալում ենք իրական արդիւնք, պարտաւոր ենք արմատական փոփոխութեան ենթարկել և մեր պայմանները:

Եթէ մէկը պատահմամբ մեզնից հարցնէ ճաշակի տէր պարսկաստանցիներ արդեօք ինչ էք վճարում ձեր ուսուցիչներին, որ այդպէս մեծ-մեծ էլ պահանջներ էք անում ինչ կը պատասխանենք, արդեօք կարող ենք համարձակ կերպով հրապարակ հանել մեր վճարած գումարի քանակութիւնը, առանց զգացումներ վիրաւորելու:

Այդ էլ թողնենք, մենք, օրհնուած պարսկահայերս ինչով ենք կարող հրապուրել նշանաւոր ուսուցիչների, որոնք վարժւած են արտասահմանի ճոխ և փայլուն կեանքին. փառք Աստուծոյ ներկայ ժամանակումս էլ հօ ճգնաւորներ չեն ապրում աշխարհի երեսին: Ուրեմն դրսից պէտք է յոյսներս միանգամայն կտրենք, որովհետև մեր ներկայ պայմաններով արտասահմանի ոչ մի արժանաւոր ուսուցչի չենք կարող գոհացնել. մեր միակ յոյսը մնում է տեղական ուժերի վրայ:

Առ այժմ, այդ տեղ էլ մի գոհացուցիչ բան չենք նշմարում. ուրեմն ինչ անենք:

Տեղական ուժ չը կայ, խոստովանւում ենք, բայց պատրաստելը արդեօք դժուար է:

Ոչ, շատ հեշտ է, տասը տարի առաջ եթէ մտածած լինէինք տեղական պատանիներից (ընտրութեամբ ի հարկ է) արտասահմանում պատրաստել ուսուցիչներ, այսօր արդէն ունէինք մի կանոնաւոր խումբ. չը մտածեցինք, հոգ չէ, անցածը անցաւ, ուրեմն մտածենք ապագայի համար:

Ուրախութեամբ պէտք է յայտնել, որ թէհրանցիք, (նա էլ մասնաւոր անհատներ) մտածել և մտածում են այդ մասին. Գէորգեանում, Լազարեանում, Ներսէսեանում և Էքօլ Նօռմալում 1) պատրաստւում են ապագայ ուսուցիչներ:

Բացայայտ է, որ լոկ այդ վարժարանների գոյութեամբ նրանք չը պիտի կարողանան ապագայ պահանջներին գոհացումն տալ. յուսալի է, որ թէհրանցիք մասնաւորների վրայ ծանրացած այդ հոգը կը բաժանեն իրենց մէջ և հաւաքական ուժերով կաշխատեն որպէս զի ապագայում կարող լինեն ձեռք բերել մասնագէտ ուսուցիչներից կազմւած մի լաւ խումբ: Բացի այդ, նրանք իրենց հետ կը մտցնեն մեր մէջ թարմ հոսանք և կը բժշկեն մեր հիւանդ ազգային մարմինը:

Կասկած չը կայ, որ պարսկաստանի միւս քաղաքներում ապրող հայերն էլ կը հետևեն թէհրանցիների այդ նշանաւոր քայլին:

1) Մէկն արդէն աւարտել է և այսօր պաշտօնի գլուխ է, իսկ մի ուրիշը դեռ շարունակում է:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Իտալիոյ հիւպատոսը Զէյթունից հեռագրել է իւր Դեսպանին (՚ի Պօլիս) թէ տեղացիների թշւառ վիճակը և հազարաւոր փախստականների՝ դառն ցրտից եւ անօթութիւնից հիւանդանալը անտանելի և աներևակայելի է, հարիւրաւոր հիւանդներ և մեռածներ միմեանց վերայ են թափւած շատ կանայք և աղջիկունք մէկ կտոր լաթ անգամ չունեն իրենց ծածկելու համար. տեղից (Զէյթունից) դուրս ուղարկած փախստականներից շատերը ճանապարհում անօթի և յոգնած մեռել են. կառավարութիւնն անկարող է օգնելու և երկրիս մէջ էլ չկայ մէկը, որից կարելի լինի օգնութիւն խնդրել. անմիջական օգնութիւն է հարկաւոր: Ամերիկեան «կարմիր խաչի» ընկերութեան ներկայացուցիչ, օրիորդ Բարթօնը խնդրել է, որ երթայ Զէյթուն, և սպասում է որ Թիւրք կառավարութիւնն արտօնութիւն տայ, սակայն վերջինս դեռ տարակուսութիւններ է անում:

ԵՐԲՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՑՐԵՆԻ ԼԵԶՒԻ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Խլոտ ուշադրութեան արժանի է այն հարցը, թէ ինչու մեր երեխայոց հետ չենք խօսում այն լեզուով, որ մենք միմիանց հետ խօսելու ժամանակ գործածում ենք. օրինակ երբ հարկաւոր է լինում մանկան հետ խօսել «ջուրի» մասին այդ բառը մենք արտաբերում ենք բոլորովին այլանդակ ձեւով, որ ծագմամբ և ոչ մի լեզուի չէ պատկանում. ինչպէս «բիւվա» կամ հայ բառի փոխարէն՝ ասում ենք «փափա»։ Չէ՞ որ «բիւվա» և «փափա» արտասանող փոքրիկն ընդունակ է ջուր ու հայ բառերն ևս արտասանել միևնոյն հեշտութեամբ։

Սակայն, սմանք առարկելով ասում են, թէ մանուկն ինքն է ստեղծում այդ բառերը և թէ մանուկն աւելի հեշտութեամբ կարող է արտասանել այդ տեսակ շինծու բառեր, քան թէ իրենց բուն հնչիւններով։

Այդ կէտում, պէտք է ասած, որ կատարելապէս սխալւում են, փոքրիկ մանուկը չէ կարող անուններ ստեղծել և թէ ունենալով թարմ ուղեղ և զօրաւոր յիշողութիւն շատ հեշտութեամբ կարող է ըմբռնել և տպաւորել իւր մտքում այն ամեն բառերը, որ իր ներկայութեամբ արտասանում են։

Բացի այս շինծու բառերից, մենք հայերս սովորութիւն չունինք ոչ միմեանց հետ և ոչ մեր զաւակների հետ հայերէն բառերով խօսել, երբեմն պատահում ենք այնպիսի խօսակիցների որոնց բոլոր խօսակցութեան հազիւ մէկ տասերորդ մասը հայերէն է լինում, իսկ միւս 9-որդը կամ թուրքերէն է և կամ պարսկերէն. օրինակ հեռաւոր պարպերութիւնը. *Շահից ֆարման սաղը էլաւ։*

Ի հարկէ չենք կարող պախարակել նրանց՝ որոնք հայերէն չեն գիտեր, վարժարան չեն տեսել, սակայն ինչ ասել նրանց՝ որոնք ուսումնարանների շէմքերում բաւական կօշիկ են մաշել։

Աւելի ցաւալին այն է, որ երբ մի երիտասարդ դուրս է գալիս ուսումնարանից, մտնում է իւր ընտանիքի մէջ, փոխանակ իր սովորածը նրանց մէջ տարածելու, փոխանակ, այսպէս ասած նրանց իր յետևից քաշ տալու, ինքն է սկսում հետևել նրանց և մի տեսակ ամօթ է համարում նրանց հետ մաքուր հայերէն խօսելը և՝ ամենայնով նոյն աղաւաղեալ քայքայուած լեզուն միշտ մնում է մեր մէջ կենդանի։

Պ. Ն. Պետրոսեանց.

Թէհրան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թէհրան. 16 մարտ 96

Յիշում եմ, կարծեմ անցեալ տարի էր Այվատեան վարդապետի հովանաւորութեան տակ մի հանդէս տրւեցաւ Ղազվինայ թաղի Հայկազեան դպրոցում յօգուտ Ընթերցասիրաց ընկերութեան գրադարանին։ Ծոմտակներից մէկը՝ որ դեռ գտնւում է ինձ մօտ ապացուցանում է, որ ասմտակները կրելու են եղել «Միհրանեան Գրիգորեան, զանձապետ ընթերցասիրաց ընկերութեան» տարագրութիւնը։ Մինչև այսօր ոչ պարպերական հրատարակութեանց և ոչ էլ մասնաւոր հաշուեցոյցով բաղդ ենք ունեցել տեսնելու այդ հանգիսի հաշիւը, կամ գէթ իմանալու թէ ինչ եղաւ նրա գումարը։

Այդ պատասխանատուութիւնը աւելի ընկնում է փոխանորդ հօր և տարագրող Միհրան խան Գրիգորեան զանձապետի վրայ. արդեօք բանաւոր չէ՞ խնդրել յիշեալ յարգելի անձնաւորութիւններից, որ բարեհաճին պատուական թերթիդ միջոցով մի բաւականութիւն տալ լարուած մտքերին։

Թէհրանցի.

ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

---

7 Մարտ 96

Ով որ առիթ է ունեցել վերջին ժամանակներս հրատարակւող լրագրութեան մէջ կարդայու Դավրէժի հայ ազգաբնակութեան կեանքի վերաբերեալ պատմութիւնը, նա համոզուած կը լինի, որ այդ կեանքը ներկայացնում է միայն հեռզհետէ դարբնւող և փշրւող բարենպատակ ընկերութեանց շղթայի մի անվերջ շարք, սակայն ինչ են լինում այդ ընկերութիւնները, ինչ օգուտ են տալիս նրանք ազգին դա մնում է միշտ հարց։

Վերջերս մի ընկերութիւն էլ կամեցաւ սարքել Սարաճեան փոխանորդ հայրը «Աղքատասիրաց ընկերութիւն» անունով, նրա նպատակը պիտի լինէր, ինչպէս լսում ենք, օգնել կարօտեալներին և վարժարանների չքաւոր ուսանողներին և ուսանողուհիներին և այլն։

Այդ մասին փոխանորդ հայրը ընդհանուր ժողովի հրաւիրեց Դավրէժի հայ հասարակութեան սակայն անունը դուր չեկաւ ժողովականներին, նրանք խորհուրդ տուին որ այդ անունը փոխեն և «Ազգասիրական բարեգործական ընկերութիւն» անուանեն (Թիֆլիսի բարեգործական ընկերութեան նման)։ Մի մասնախումբ ընտրեցաւ 6 հոգուց բաղկացած, կանոնագիրը մշակելու համար։ Մենք հակառակ չենք այդ բարենպատակ ձեռնարկին ընդհակառակն յաջողութիւն ենք մաղթում սակայն եթէ չենք սխալւում այդ ընկերութեան նպատակներն գրեթէ նոյնն են ինչ որ մի ժամանակ գոյութիւն ունեցող Սէր ընկերութեանը, եթէ այդ պարոնները խոստովանւում են այդպիսի մի հասատատութեան գոյութեան անհրաժեշտութիւնը, ապա ինչու արդէն եղածը թող տուին որ քանդւի, ինչու բացի այն՝ որ իրենց մի մատովն անգամ չօգնեցին այդ գործին հոգով սրտով նուիրւած անձերին, մինչև անգամ գլխաւոր հարւածողները եղան. նրա համար որ դրա գործիչները ազաների հաշին խաւնկ չէ՞ին ծխում, դրա համար, որ նախաձեռնութիւնը այս ինչ ազալին, այն ինչ տէրտէրին կամ վարդապետին չէ՞ր պատկանում։ Կարծում ենք փոխանակ մի նոր ընկերութիւն հիմնելու աւելի լաւ կանէին մեր «բարեգործութեան» սիրահար բարեկամները կրկին յորութիւն տային Սէր ընկերութեան և թող տային որ «բարեգործութեան» անիւները գլորւէին կրքի, տգիտութեան և սխի մահացած դիակների վրայից։

Զալ.

ՆԱՄԱԿ ՌՈՇՏԻՑ

---

3 մարտ 96

Ճաւիղի № 6-ում նամակ Ռաշտից «Սուս» ստորագրութեամբ գրուածը միայն իմ ծիծաղը շարժեց, ուրիշ ոչինչ, ուստի պատասխանել նորա որևէ կէտին և կամ ջրել աւելորդ եմ համարում և ժամանակի կորուստ, որովհետև «Սուս»-երի նման թղթակիցների հնաւանդ սովորութիւնն է անտեղի հայհոյանքներ թափել ոչ միայն իմ, այլ և շատ անմեղների հասցէներին, փաղցցային լուրերը հալած իւղի տեղ ծախել խեղճ ընթերցողներին ճիշդ եղելութիւնը յեղաշրջել և այլն։ Գուցէ և այս անգամ էլ գրիչ չառնէի ձեռքս եթէ չմեղադրւէի շատերից իմ լռութեանս համար։ Ուրեմն ես սորանով հանգստացնում եմ յարգելի ընթերցողներին, որ թող նոքա երբէք չվրդովեան իմ փոխարէն, երբ յիշեալ թերթում այդպիսի յօդւածների կատահին, որ գրուած կլինի անձնական հաշիւներից դրդուած և իմ կողմից արհամարհանքի արժանացրած։ Որովհետև այդպիսի դէպքերում սկսում ես մտաբերում եմ Ղ.Ազայեանցի «Լուսնահաչ» վերնագրով ստանաւորը։ Թող նրանք էլ կարդան, այդ բաւական է։

Ուսուցիչ.

ՆԱՄԱԿ ՁՈՒՐՁՈՒՑ

---

1 մարտ 96

Յիշատակութեան արժանի մի բան չը կայ, միայն ամսոյս 3-ին նշանակուած է տեղւոյս Ազուլեաց եկեղեցու նոր. երեցփոխի ընտրութիւնը։

Մենք կը խնդրէինք նոյն եկեղեցու հիմնարկութեան տարեդարձին մեր «բարեգործութեան» սիրահար բարեկամները կրկին յորութիւն տային Սէր ընկերութեան և թող տային որ «բարեգործութեան» անիւները գլորւէին կրքի, տգիտութեան և սխի մահացած դիակների վրայից։

Զալ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՏԻՑԱՑԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

(Revue des Revues; dans le pays de Miatza) *(«Միր Բօժիյ» 1896 № 1)*

Եթէ Պրազ կամ չեխերի մի այլ քաղաք մտնէք, ընթերցող, հետեւեալ ընորոշ հանգամանքն անպատճառ կը գրաւի ձեր ուշադրութիւնը: Ամեն տեղ՝ ճաշարաններում, սրճարաններում, վաճառատներում, եթէ միայն տէրը չեխ է, ամենաաչքի ընկնող մասում կը տեսնէք շքեղ շրջանակի մէջ ամփոփած մի մեծ թերթ թուղթ՝ զարդարուած ծաղկանկարներով, դրուագներով:

Եթէ դիմէք այդ տէրերից մէկին եւ հարցնէք, թէ ի՞նչ է նշանակում այդ թուղթը, կընկատէք, որ ձեր տգիտութիւնը վիրաւորել է նրան: Մի արհամարհական հայեացքով նա չափում է ձեզ ոտից գլուխ, եւ միայն այն ժամանակ, երբ համոզւում է որ դուք օտարերկրացի էք, հպարտութեամբ պատասխանում է.

Սա «Չեխական դպրոցական Մատիցայի» դիպլոմն է: Այդպիսի դիպլոմ ստանում՝ է իւրաքանչիւր մարդ, եթէ յօգուտ Մատիցայի հարիւր գուլդէն է մանակները հրատարակող լրագրութեան մէջ կարդայու Դավրէժի հայ ազգաբնակութեան կեանքի վերաբերեալ պատմութիւնը, նա համոզուած կը լինի, որ այդ կեանքը ներկայացնում է միայն հեռզհետէ դարբնւող և փշրւող բարենպատակ ընկերութեանց շղթայի մի անվերջ շարք, սակայն ինչ են լինում այդ ընկերութիւնները, ինչ օգուտ են տալիս նրանք ազգին դա մնում է միշտ հարց։

Վերջերս մի ընկերութիւն էլ կամեցաւ սարքել Սարաճեան փոխանորդ հայրը «Աղքատասիրաց ընկերութիւն» անունով, նրա նպատակը պիտի լինէր, ինչպէս լսում ենք, օգնել կարօտեալներին և վարժարանների չքաւոր ուսանողներին և ուսանողուհիներին և այլն։

Այդ մասին փոխանորդ հայրը ընդհանուր ժողովի հրաւիրեց Դավրէժի հայ հասարակութեան սակայն անունը դուր չեկաւ ժողովականներին, նրանք խորհուրդ տուին որ այդ անունը փոխեն և «Ազգասիրական բարեգործական ընկերութիւն» անուանեն (Թիֆլիսի բարեգործական ընկերութեան նման)։ Մի մասնախումբ ընտրեցաւ 6 հոգուց բաղկացած, կանոնագիրը մշակելու համար։ Մենք հակառակ չենք այդ բարենպատակ ձեռնարկին ընդհակառակն յաջողութիւն ենք մաղթում սակայն եթէ չենք սխալւում այդ ընկերութեան նպատակներն գրեթէ նոյնն են ինչ որ մի ժամանակ գոյութիւն ունեցող Սէր ընկերութեանը, եթէ այդ պարոնները խոստովանւում են այդպիսի մի հասատատութեան գոյութեան անհրաժեշտութիւնը, ապա ինչու արդէն եղածը թող տուին որ քանդւի, ինչու բացի այն՝ որ իրենց մի մատովն անգամ չօգնեցին այդ գործին հոգով սրտով նուիրւած անձերին, մինչև անգամ գլխաւոր հարւածողները եղան. նրա համար որ դրա գործիչները ազաների հաշին խաւնկ չէ՞ին ծխում, դրա համար, որ նախաձեռնութիւնը այս ինչ ազալին, այն ինչ տէրտէրին կամ վարդապետին չէ՞ր պատկանում։ Կարծում ենք փոխանակ մի նոր ընկերութիւն հիմնելու աւելի լաւ կանէին մեր «բարեգործութեան» սիրահար բարեկամները կրկին յորութիւն տային Սէր ընկերութեան և թող տային որ «բարեգործութեան» անիւները գլորւէին կրքի, տգիտութեան և սխի մահացած դիակների վրայից։

Զալ.

ՆԱՄԱԿ ՌՈՇՏԻՑ

---

3 մարտ 96

Ճաւիղի № 6-ում նամակ Ռաշտից «Սուս» ստորագրութեամբ գրուածը միայն իմ ծիծաղը շարժեց, ուրիշ ոչինչ, ուստի պատասխանել նորա որևէ կէտին և կամ ջրել աւելորդ եմ համարում և ժամանակի կորուստ, որովհետև «Սուս»-երի նման թղթակիցների հնաւանդ սովորութիւնն է անտեղի հայհոյանքներ թափել ոչ միայն իմ, այլ և շատ անմեղների հասցէներին, փաղցցային լուրերը հալած իւղի տեղ ծախել խեղճ ընթերցողներին ճիշդ եղելութիւնը յեղաշրջել և այլն։ Գուցէ և այս անգամ էլ գրիչ չառնէի ձեռքս եթէ չմեղադրւէի շատերից իմ լռութեանս համար։ Ուրեմն ես սորանով հանգստացնում եմ յարգելի ընթերցողներին, որ թող նոքա երբէք չվրդովեան իմ փոխարէն, երբ յիշեալ թերթում այդպիսի յօդւածների կատահին , որ գրուած կլինի անձնական հաշիւներից դրդուած և իմ կողմից արհամարհանքի արժանացրած։ Որովհետև այդպիսի դէպքերում սկսում ես մտաբերում եմ Ղ.Ազայեանցի «Լուսնահաչ» վերնագրով ստանաւորը։ Թող նրանք էլ կարդան, այդ բաւական է։

Ուսուցիչ.

Տասնութերորդ դարու վերջին ո՛չ չեխ ազնուականներ կային, ո՛չ քաղաքացիներ եւ ոչ լուսաւորուած դասակարգ: Ազգայնութիւնը պահպանում էր միայն գիւղացին, որին բարձր դասակարգերը քանուոը անասուն էին համարում՝, ուստի եւ հոգ չէին քաշում՝ նրան զերմանացնելու:

Սակայն եկաւ ժամանակ, երբ գիւղացին էլ մարդ ճանաչուեց: Յովսէփ Բ-ի ռէֆորմներն ինքնուրոյն կեանքի էին կոչում եւ չեխ գիւղացուն: Եւ ահա գիւղացիների միջից դուրս են գալիս մարդիկ, որոնք սկսում են հայրենի կուլտուրայի ասպարիզում գործել, ծաղկացնում՝ են չեխաց գրականութիւնը, որի զարգացման բնական ընթացքը խանգարուել էր պատմական դէպքերի դաժան ձեռքով. հետզհետէ առաջ է գալիս լուսաւորուած դասակարգ, որ՝ շրկարելով իւր կապը մ՝այրենի ժողովրդից, նրա համար լաւագոյն ապագայ է պատրաստում:

Տեղը չէ չեխական վերածնութեան պատմութիւնն անել, նկարագրել, թէ ինչպէս զարթեց, ոտի կանգնեց այն ազգը, որին մնած էին համարում ո՛չ միայն թշնամիները, այլ եւ բարեկամները, որ ներկայումս եւրոպական քաղաքակրթութեան հասած չեխ ժողովուրդը: Իւրաքանչիւր շաբաթ չեխաց քաղաքների հրապարակներում խարոյկներ էին վառվում: Այդ եղուխներն էին, որ չեխաց զրքերն էին այրում: Չեխիայի քաղաքները լցուած էին զերմանացիներով, այնպէս որ ամեն տեսակ հարուածներից ազատ ուած ազգաւոր չեխերը էլ վերջ ի վերջոյ զերմանացան:

Տասնութերորդ դարու վերջին ո՛չ չեխ ազնուականներ կային, ո՛չ քաղաքացիներ եւ ոչ լուսաւորուած դասակարգ: Ազգայնութիւնը պահպանում էր միայն գիւղացին, որին բարձր դասակարգերը քանուոը անասուն էին համարում՝, ուստի եւ հոգ չէին քաշում՝ նրան զերմանացնելու:

Սակայն եկաւ ժամանակ, երբ գիւղացին էլ մարդ ճանաչուեց: Յովսէփ Բ-ի ռէֆորմներն ինքնուրոյն կեանքի էին կոչում եւ չեխ գիւղացուն: Եւ ահա գիւղացիների միջից դուրս են գալիս մարդիկ, որոնք սկսում են հայրենի կուլտուրայի ասպարիզում գործել, ծաղկացնում՝ են չեխաց գրականութիւնը, որի զարգացման բնական ընթացքը խանգարուել էր պատմական դէպքերի դաժան ձեռքով. հետզհետէ առաջ է գալիս լուսաւորուած դասակարգ, որ՝ շրկարելով իւր կապը մ՝այրենի ժողովրդից, նրա համար լաւագոյն ապագայ է պատրաստում:

Տեղը չէ չեխական վերածնութեան պատմութիւնն անել, նկարագրել, թէ ինչպէս զարթեց, ոտի կանգնեց այն ազգը, որին մնած էին համարում ո՛չ միայն թշնամիները, այլ եւ բարեկամները, որ ներկայումս եւրոպական քա-

ծխականներին, որ անձնական շահերը և խնամիական կապերը մի կողմ թողած, սովորականի պէս որոշ-որոշ կուսակցութեան չը բաժնուեն և հասարակաց շահերը չը վնասեն. իսկ այն պարոններին, որոնք ձգտումն ունին այդ պաշտօնին, բայց համապատասխան չեն պահանջներին, խորհուրդ կը տալինք հրաժարուել և ասպարէզը թողնել աւելի արժանաւորներին, որով մեծ ծառայութիւն կը լինեն կատարած թէ յօգուտ եկեղեցւո և թէ ի նպաստ հասարակաց շահերին. ընտրութեան հետևանքը կը հաղորդեմ միւս անգամ։

Գ. Հախխեանց.

ՆԱՄԱԿ ԷՋՄԻԱԾՆԻՑ

Ճեմարանից. 6 մարտ 96

Այս անգամ երկար գրելիք չունեմ, թէ ունենամ էլ չեմ կարող գրել, որովհետև խիստ յուզուած տրամադրութեան տակ եմ գտնւում։

Ճեմարանը այս վերջին տարին կառավարութեան ուշադրութիւնն այնպէս է հրաւիրել որ շատ անգամ այդ անմեղ հաստատութիւնը խուզարկութեանց է ենթարկւում։

Մօտ օրերս մի այդպիսի անտեղի խուզարկութիւն ևս տեղի ունեցաւ այս անգամ ենթական ննջարանն էր։

Երկար խուզարկութիւնից յետոյ նկատողութեան արժանի ոչինչ չը գտան բայց դադարկ ձեռքով չը մեկնելու համար չորս տաճկաստանցի ուսանողների ընտանեկան նամակները հաւաքեցին տարան և դրա մէջ էլ բաւականութիւն գտաւ իրենց հետաքրքրութիւնը։

Երանի՜ թէ այդ չնչին բաւականութեան համար ուրիշ անգամ մեզ չը վրդովէին։

Ուսանող.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 24-ին Պարսկաստանը պիտի կատարէ իւր վեհապետի գահակալութեան 50-ամեայ յօբելեանը. այդ մասին պաշտօնական և մասնաւոր կարգադրութիւններն արդէն լինում են։

Թէհրանի հայերն ևս պատրաստւում են մասնակցել այդ յօբելեանին յայտնելով իրենց խնդակցութիւնը Վեհափառ Յօբելեարին. այդ մասին փոխանորդ հայրը՝ արդէն կազմել է մի յանձնախումբ, որի պաշտօնը պիտի լինի մշակել ծրագիրը։ Լաւ կը լինէր եթէ Պարսկաստանի միւս քաղաքների և գաւառների հայերն ևս մասնակցէին և ունենային իրենց ներկայացուցիչները։

Անցեալ Չորեքշաբթի փոխանորդ հայրը Նօվրուզի առթիւ ներկայացաւ Ն. Վսեմ. Սադր-Ազամին և Ն. Մեծութեան կարգադրութեամբ երկրորդ օրը (Հինգշաբթի) ներկայացաւ Վեհ. Շահին։ Երկու օրերն էլ արժանավայել ընդունելութիւն գտաւ։

Արքունական բանդի հայ պաշտօնեաներից պ. պ. Աբրահամ Մելիք Աբրահամեանցը և Ալբէռ Տէր Յովհաննէսեանցը, ձեռնարկել են մի վիճակախաղի 30,000 ղրան արժողութեամբ, հայ սովեալների օգտին։

Թէհրանի ուսումնասիրաց ընկերութիւնն ևս 15,000 ղրանի մի վիճակախաղ է պատրաստել յօգուտ հայկական դպրոցի։

Շարունակ տեղացող անձրևներից Մայրաքաղաքիս տների մեծագոյն մասը վնասուել է։ Միանգամայն փլած՝ և փլատակների տակ ամբողջ ընտանիքներ ծածկած տների թիւն էլ քիչ չէ։

=

Ներկայ համարում Արձագանքից արտատպում ենք մի գեղեցիկ պատկեր որ ներկայացնում է գերմանացիներից ընկճուած մի փոքրիկ ժողովրդի ցոյց տուած հերոսական ճիգերը իւր ազգային անկախութիւնը պահպանելու համար. մեր ընթերցողների ուշադրութիւնն ենք հրաւիրում այդ կտորի վրայ։

=

Մարտ 26-ին (ն. տ.) Հասանապատ թաղի ամերիկացոց ժողովարանում տեղի ունեցաւ 6 հոգի ընթացաւարտ աշակերտների՝ վկայականների բաշխման հանդէսը։ Ընթերցաւարտներից իւրաքանչիւրը մի մի ճառ խօսեց։ Նրանցից երեքը հայ էին պ. Համբարձում Ալէքսանեան, պ. Սաղաթէլ Մ. Զօհրաբեան, և Միքայէլ խան Ենակօլօփեան, իսկ միւս երեքը հրէայ էին Դաւութ, Ալուբ, և Արատթու անուններով։ Հանդիսին մասնաւոր փայլ էին տալիս Պատուելուհի օր. Քլարք. Տիկ. Զանտլըր և Տիկ. Քէյն։ Առաջինը իւր երգեհոնով և վերջիններն իրենց երգերով։ Հանդէսն տևեց մօտ 2 ժամ։

=

Շաբաթաթերթիս նախորդ թւով սև փողի համար մեր յայտնած ենթադրութիւնը իրականութիւն ստացաւ. անցեալ հինգշաբթի պաշտօնական յայտարարութեամբ հրամայուեցաւ 30 շահին մէկ ղրան հաշուել 4-5 օր այդ հրամանը գործադրւում էր, բայց ի նկատի ունենալով ժողովրդի կրած վնասը՝ երեքշաբթի օր կրկին մի պաշտօնական յայտարարութիւն ջրեց այդ կարգադրութիւնը. այնպէս որ այսուհետև դարձեալ 20 շահին մէկ ղրան պիտի հաշուել։ Այդ կարգադրութիւնը եղել էր նրա համար, որ Վեհափառի Յօբելեանի առթիւ պատրաստւող նոր դրոշմով պղինձ փողը շուտով գործածութեան մէջ մտնէր։

=

Դավրէժից մեր մասնաւոր թղթակիցը գրում է, որ այնտեղի Լիլավայի թաղի, Հայուհեաց ընկերութիւնը՝ հայ սովեալների համար հանգանակութեան է ձեռնարկել և միայն Ղալայից 400 թուման է հաւաքել։ Ողջունում ենք Դավրէժի հայուհեաց ընկերութեան այդ բարենպատակ ձեռնարկը, յուսով ենք որ եռանդով յառաջ կը տանեն իրենց ձեռնարկած համակրելի գործը և որով այս ճգնաժամի մէջ Դավրիժեցի կինն էլ օգնած կը լինի իւր տառապեալ եղբայրներին և քոյրերին։

Նոյն տեղից լսում ենք որ բաղաքական հայ տիկնայք բժշկուհի Օրիորդ Փօրդի առաջնորդութեամբ երկուշաբթը մի անգամ հասարակաց դասախօսութիւններ են կազմում, նիւթն է երեխաների կրթութեան մասին մատչելի հրահանգներ, այդ ժողովներին ներկայ են գտնւում և հայ լուսաւորչականներ։

Դավրէժի Լիլավայի դպրոցների հոգաբարձութիւնը 96 թւականի համար ձեռնարկել է վիճակախաղի։ Բերդաթաղի դպրոցների հոգաբարձութիւնն ևս մտադիր է նոյնն անելու։

Լսում ենք, որ Սալմաստի Հաֆթուան գիւղում մի խումբ սիրողներ պատրաստւում են թատրոնական ներկայացումներ տալ։

Նոյն տեղից լսում ենք, որ տաճկահայերից մի նշանաւոր գաղթականութիւն է անցել Սալմաստ և թէ Քիւրդիստանի և սահմանի քիւրդերը շարժման մէջ են։ 1)

Դավրէժից մեր մասնաւոր թղթակիցը հեռագրում է՝ որ յայտնի աւազակապետ Նաբին Ուրմիի կողմերում սպանուել է։ Նաբին երկար տարիներից ի վեր գրեթէ բոլոր Կովկասի համար մի պատուհաս էր դարձել։ Ուստի նրա մահը կարելի է ասել որ Կովկասի ժողովուրդին ցնծութիւն պիտի պատճառէ։

1) Սակայն շնորհիւ պարսից կառավարութեան աչալուրջ հսկողութեան, այդ շարժումները խեղդուեցան բնի մէջ։

ղաքականութեան զգայի շարքում առաջնակարգ տեղերից մէկն է բռնում։ Չեխաց ազգը վերածնուեց. սակայն նա երբէք չէ կարող մոռանալ այն ծանր վէրքերը, որ եւրոպական գերութիւնն է հասցրել։

Եթէ վերցնենք երբեմն բուն չեխական գաւառների՝ Չեխիայի, Մորաւիայի եւ Սիլէզիայի ազգագրական քարտէզը, ապա միանգամից կըտեսնենք, թէ ինչ հետեւանք է ունեցել գերմանացիների ղարատը գերիշխութիւնը եւ թէ չեխաց ազգն ինչպիսի վտանգի է ենթարկւում նոյն իսկ այժմ։ Գերմանացիք հալածել են նրան լեռներից եւ այդպիսով զրկել բնական սահմաններից, Գերմանական տարրը երեք կողմից շրջապատում է չեխերին։ Արեւելքում միայն, որ չեխերը դրացի են լեհերին ու սլաւակներին, նրանց ազգայնութեանը վտանգ չէ սպառնում։ Գերմանական հեղեղն աւելի եւ աւելի է առաջ շարժւում. նա բոլորովին ծածկել է Սիլէզիան եւ պատրաստւում է սահմանակից Չեխիայից անջատել Մորաւիան։Գերմանացիք առաջ են շարժւում՝ զինուած գերմանական կուլտուրայով,ըմառուած այդ կուլտուրայի հզօր միջոցներով, որոնք են՝ մամուլ, դպրոց, գրականութիւն։ Գերմանական տարրն առաջ է շարժւում ամեն կողմից, աշխատելով կլանել եւ ոչնչացնել սլաւոն աշխարհի ծայրագոյն արեւմտեան կայանը։

Այդպիսի թշնամու հետ յաջողութեամբ կռուելու համար պէտք է գործադրել նոյն զէնքերը, որոնցով նա՝ թշնամին է ուժեղ. կուլտուրայով կռուող թշնամու հետ պէտք է կուլտուրական զէնքերով կռուել՝ գրականութեամբ մամուլով, դպրոցով։

Անհատական հէնց այդ կուլտուրական կռուի մէջ եթէ ոչ գլխաւոր, գէթ նշանաւոր դեր է խաղում «Մատիցա դպրոցական ընկերութիւնը»։

Գերմանացիներն ամեն տեսակ միջոցներ են գործադրում, որ չեխ ազգին գերմանացնեն։ Գերմանական դպրոցներում յատուկ գումարներ կան՝ չեխ ծնողաց երեխաների համար։ Այդ դպրոցները յաճախող չեխ աղքատ երեխաները ձրիաբար ստանում են նախաճաշ եւ ճաշ, հագուստ, կօշիկ, գիրք եւ ամեն տեսակ ուսումնարանական իրեր։ Ծնողներն տեղին նրանց համար տօնածառ են կազմակերպում,արձակուրդներին զբօսանքներ եայլն։

Գերմանացի գործատէրը չեխ բանւոր վարձելով, յաճախ պայման է դնում, որ նրա որդիքը ոչ թէ չեխաց, այլ գերմանացոց դպրոցը յաճախեն,հարուստ գերմանացու մշտական աշխատութիւնն է, որ իւր չեխազգի աղախնի որդիքը չեխաց դպրոց չըմնեն։ Բայց որովհետեւ Չեխիայում գերմանացիք մեծ մասամբ հարուստ մարդիկ են՝ բացի դրանից՝ աստիճանական կառավարութեան աջակցութիւնն են վայելում ըստ ամենայնի, ուստի եւ չափազանց դժուար է նրանց ջանքերը ոչնչացնել։

Պէտք էր ընդդիմադրել նրանց որքան հնարաւոր է. այսինքն պէտք էր աշխատել, որ ամեն տեղ, ուր չեխաց ազգայնութեանը վտանգ է սպառնում, չեխական դպրոցներ լինէին։ որպէսզի այն ծնողները, որ կամք եւ կարողութիւն ունին իրանց որդիներին չեխաց դպրոցներն ուղարկելու, ստիպուած չլինէին գերմանական դպրոցներին դիմել, անանելով, որ չեխաց դպրոց չըկայ 1)։ Այս պատճառով պէտք էր հոգալ, որ չեխաց երկրում, նոյնպէս եւ այն քաղաքներում եւ գիւղերում, ուր չեխերը փոքրամասնութիւն կազմելով չեն կարող սահմանական դպրոց պահանջել ի հաշիւ հասարակական գումարների, հիմնուէին չեխական դպրոցներ չեխ մանուկներին գերմանացնելուց ապահովելու նպատակով։

*) Չեխիայում որպէս և արևմտեան Եւրոպայի բոլոր երկրներում իւրաքանչիւր երեխայ պարտաւոր է դպրոց յաճախել։

Ահա հէնց այդ նպատակին է ծառայում «Չեխական դպրոցական Մատիցա Ընկերութիւնը», որ հիմնուել է 1880 թ. մի քանի չեխ ուսուցիչների նախաձեռնութեամբ։

«Չեխական դպրոցական Մատիցա» ընկերութիւնը իւր գործունէութիւնը բանալով, համոզուած էր, որ չեխական ամբողջ ազգն իրան օգնութեան կըհասնի. եւ չսխալուեցաւ։ Իւր գոյութեան առաջին հինգ տարիների ընթացքում Ընկերութիւնը» 804,000 գուլդէն ժողովեց։ Այդ գումարը գործադրուեցաւ երեսուն եւ երեք մանկական ապաստարան, 23 դպրոց եւ երկու գիմնազիօն պահպանելու համար։ «Ընկերութեան» պահ ընուող պարապող ուսուցիչների թիւը 15ն էր հասնում։

(Կը շարունակուի)

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաշտօնապէս հաստատուել է այն լուրը, թէ Պարսկաստանի Վեհապետի կողմից Զարի թագադրութեան հանդիսին ներկայ պիտի գտնուի Ն. Վեհ. Շահի եղբայրը Մօլք-Արան։ Ն. Մեծութիւնը արդէն պատրաստւում է մեկնելու։

=

Այսօր՝ յանկարծամահ եղաւ ժամուլի նախարար՝ Ն. Վսեմ. Էթթըմադ-էլ Սալթանան։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Զէյթունի ապստամբած՝ 12,000, փախստականները ամենածայրայեղ վիճակումն գտնուէ, որոնք արդէն սկսելին դառնալ իրենց գիւղերը հիւպատոսների հսկողութեան տակ։

Լուր է հասել թէ Սիվասի բռնաւորչական հայերը՝ կոտորածներից եւ հալածանքից ազատուելու համար վճռելին համբերատարութիւն ընդունել, որովհետեւ տեսնումեն թէ բռնաւորչական մնալով Ռուսից չեն պաշտպանուում, մինչդեռ քաթոլիկները վայելումեն գաղիական պաշտպանութիւնը։

Մուշի Անգղիական հիւպատոսն այսպէս է հեռագրում դեսպանին «Տէր ուրախութեամբ տեղեկացնում եմ ձեզ որ Սասուն եւ Տալւորիկ գաւառներում խաղաղութիւն է տիրում, եւ թէ այդ տեղերի զինուորները քիւրդերին կարգի տակ են բերել, գոնեթէ ամեն օր ցորեն ենք ուղարկում գիւղացոց համար Իշխէնաէրի եւ իր շրջակայի գիւղացիների համար՝ ճանապարհների հեռութեան եւ դժուարութեան պատճառով, հարկադրուած, կանխիկ փողենք ուղարկում ցորենի փոխարէն»։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Tribuna թերթը, քննադատելով Սուլթանի, Անգղեային արած այն առաջարկութիւնը, որով հրաւիրում է վերջինիս՝ Եգիպտական խնդիրը ևնորանում Տաճկաց ունեցած իրաւունքները կանոնաւորելու, այն պայմանաւ որ ինքն էլ պիտի երաշխաւորէ Անգղեացոց Հնդկաստանի հետ ունեցած յարաբերութիւնները, ասում են թէ առաջարկութիւնը այնքան էլ կարեւորութիւն չպիտի ունենար եթէ Սուլթանը Ռուս և Ֆրանսայի բերանը եղած չը լինէր։ Այս առաջին հրապարակական գործողութիւնն՝ ասում է Tribuna որ նոր երբեակ դաշնակցութիւնը (այսինքն ռուս, Ֆրանս և Թիւրքն) ձեռնարկում է, ժամանակն է տեսնելու թէ Անգլիան ինչ պատասխան պիտի տայ Սուլթանին և թէ մինչև որ աստիճան պիտի երկարի նորա համբերութիւնը։

----Ռուսաց Վատիկանի ներկայացուցիչ պ. Իսվոլսքին պաշտօնապէս յայտնել է Ն. Սրբութեան, թէ Զարի թագադրութիւնը տեղի պիտի ունենայ յառաջիկայ մայիսին. հաստատ լուր է պտտում թէ Պապն էլ ներկայ պիտի գտնուի թագադրութեան հանդէսին։

Հարաւային Բադէնի (Գերմանիա) լեռնոտ տեղերում ծանր երկրաշարժ է տեղի ունեցել, ցնցումից շատ շէնքեր տապալուել են։

----Աթէնքից տեղեկացնում են, թէ Կրետէի Սէլինօ գաւառի Թիւրքերն՝ վերջերս սպանուած երկու Թիւրքերի վրէժն առնելու համար, սպաննել են երկու քրիստոնեայ ընտանիքներ Թւով 12 հոգի այս լուրը տարածուելուն պէս շրջակայ գիւղերի քրիստոնեաները խմբուած յարձակւում են Թիւրքերի վերայ, որի խաղաղութեան համար կառավարութիւնն արդէն զօրք է ուղարկել։

Daily News ասում է թէ փետր. 23-ի առաւօտը՝ Քւիրինալում նախարարների մի ժողով տեղի ունեցաւ նախագահութեամբ (Իտալիոյ) Թագաւորի ուր վիճարանութեան առարկան էր Աբիսինեան բանակի խնդիրը, որով վճռեցին 10,000 հոգի նոր զօրք և 4 հատ լեռնային թնդանօթ անմիջապէս ուղարկուի Աբիսին ուր այսպիսով Իտալացիք 50,000 զօրք պիտի ունենան Աֆրիկայում, այսինքն նոյն թիւը որ Daily News երկար ժամանակ առաջ՝ նախատել էր։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌԷՅՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

Սոֆիա. 22 մարտ. Ն. Տ. իշխան Փէրդինանդը երթալու է Կ. Պոլիս իր յարգանքները ներկայացնելու Սուլթանին, եւ ապա պիտի երթայ Ս. Պետերբուրգ։

Քահիրէ. 23. մարտ Ն. Տ. գնդապետ Քոլլինսանգի բանակն առանց դիմադրութեան գրաւել է Աքաշէն, եւ շարունակում է իր արշաւանքը։

Հռոմ. 20. մարտ Ն. Տ. Դէրվիշները Քասալայի մօտերում չորս անգամ յարձակեցին իտալացիների վրայ, բայց ցրուեցան վերջինների դիմադրութիւնից։

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ Աստղ-Արևելեան Ընկերութիւն

ԱՐՏՕՆԱՏԷՐ Մակար Կ. Մակարեանց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Շաբաթաթերթիս № 12-րորդ համարը Զատկական տօնի պատճառով լոյս կը տեսնէ ապրիլ 3-ին։

Թէհրանաբնակ յարգելի հասարակութեան երկու անգամ առանձին յայտարարութեամբ ընդհանուր ժողովի հրաւիրելէն զկնի, ոչ մի անգամն էլ չը յաջողուելով նրա ներկայութիւնը տեսնել և լսնձնել Ս. Գէորգ եկեղեցւոյ եամեայ հաշիւներն, ուստի հարկ եմ համարում ձեր պատուական շաբաթաթերթի միջոցաւ տալ յարգելի հասարակութեան մի եամեայ հաշուեկշիռ. որոյ մանրամասնութիւնը ամեն մի բոպէ կարող են գտնել եկեղեցւոյ տետրակում։ Միևնոյն ժամանակ պատիւ ունիմ ձեր պատուական թերթի միջոցաւ յայտնել իմ հրաժարականս և խնդրել յարգելի հասարակութեան որ բարեհաճեն մի նոր երէցփոխան ընտրել։

Երէցփոխան Թէհրանայ Ս. Գէորգ եկեղեցւոյ։

Ալէքսան Բաղալ Վարդանեանց

Զաւա-հայ տպարան Թէհրան.

ՄՈՒՏՔ 1893 Մարտ 15-ից մինչև Դեկտ. 31-ը ԵԼՔ

ՄՈՒՏՔ	Ռ.	Կոպ.
Պատրաստի գումար անդուկում.	1035	
Լուսագին Ս. Յարութեան տօնի առթիւ.	251	50
Մոմագին Ս. Յարութեան տօնի առթիւ.	82	50
Գանձուած ապառիկ 92 թւի լուսագնի մնացորդ.	8	
Լուսագին եւ մոմագին ամբողջ տարւայ մկրտութեան հարսանեաց թաղման եւ այլն	192	60
Դիւազարդ	6	
Սեւ եւ սպիտակ փողի տար ներութիւն.	10	
Գանձանակից.	62	
4 կէս մէթր ծախուած կտորի գին.	4	
Պ. Նիկողայոս Վարդանեանի միջոց. շինութեան համար հաւաքած հանգանակութիւնը	183	25
Գումարն է	1834	85

ԵԼՔ	Ռ.	Կոպ.
Նորոգութեանց	7	20
Գնուած իւղեղէններ	55	
Ս. Յարութեան առթիւ մատաղներ պարագաներով	93	50
Գնուած մոմ եւ խունկ	101	50
Վճարած պ. Աթանէս Թադէոսեանի փ. խանագլննելու շինութեան համար.	1451	60
Վճարած լուսագին Տէր Սահ.	25	
11 ամսոյ ռոճիկ հին գերեզմանատան պահապանին.	82	50
Այլ եւ այլ ծախքեր	5	
Գումարն է	1821	30
Կշիռ փոխադրած 94 թ.	13	55
Գումարն է	1834	85

1894 Յունվար 1-ից մինչև Դեկտեմբեր 31-ը

ՄՈՒՏՔ	Ռ.	Կոպ.
1893 թուի կշիռ	13	55
Ս. ծննդեան տօնի առթիւ լուսագին եւ մատաղագին	257	75
Եկեղեցւոյ մոմագին	162	
Պ. Ղուկաս Յովսէփեանից խաչ ջրից հանելու նուէր	250	
Նուէր ծաղկազարդի	10	
Լուսագին Ս. Յարութեան տօնի առթիւ	267	25
Եկեղեցւոյ մոմագին	90	50
Լուսագին եւ մոմագին ամբողջ տարւայ մկրտութեան հարսանեաց թաղման եւ այլն.	335	25
Տիրացին հանգուց. խաչատուր Գալստեանցի.	200	
Տիրացին Տիկ. Յովսէփեան Ենակոլոփեանի	100	
Տիրացին Նիկողէս Մարտիրոսեանցի որդոց	20	
Եկեղեցւոյ եւ գերեզմանատան գանձանակներից	120	35
Նուէր	20	
4 կէս մէթր կտորի գին	16	
Գումարն է	1862	65

ԵԼՔ	Ռ.	Կոպ.
Ս. ծննդեան առթիւ մատաղ իր պարագաներով.	85	25
Ս. Յարութեան առթիւ մատաղ իր պարագաներով.	138	50
Գնուած իւղեղէններ.	153	50
Նորոգութեանց եւ շինութեան.	596	35
Ընդունելութիւն Գեր. Ծ. վարդ. Այվազեանի Էջմիած. գալիս	392	75
10 ամսոյ ռոճիկ հին գերեզմանատան պահապանին	75	
4 ամս. ռ. նոր գերեզ. պահա.	32	
Գնուած մոմ եւ խունկ	63	30
Լուսագնից ապառիկ մնացած	4	
Այլ եւ այլ ծախքեր	42	
Գումարն է	1582	65
Կշիռ փոխադրած 95 թ.	280	
Գումարն է	1862	65

1895 Յունվար 1-ից մինչև Դեկտ. 31-ը

ՄՈՒՏՔ	Ռ.	Կոպ.
1894 թիւ կշիռ	280	
Ս. ծննդ. տօնի առթիւ լուս.	237	35
Եկեղեցւոյ մոմագին	162	25
Պ. Խ. Աղամեանից խաչը ջրից հանելու նուէր.	300	
Ծաղկազարդին նուէր	10	
Ս. Յարութ. տ. առթիւ լուս.	305	
Եկեղեցւոյ մոմագին	162	
Ամբողջ տարւայ լուսագին եւ մոմագին մկրտութեան հարսանեաց եւ թաղման.	491	30
Տիրացին հնգ. Տիկ. Եղիսաբէթ Ալէքսանեանի.	100	
Եկեղեցւոյ եւ գերեզմանատան գանձանակներից	265	80
Դիւազարդ	60	
22 մէթր կտորի գին	85	
Սեննակ կառուցման համար հանգանակութիւնից.	1560	25
Սպիտակ փողի տարբեր,	54	10
Մուրհակով փոխ առած Ս. Թադէոս եկեղեցուց.	250	
Գումարն է	4323	5

ԵԼՔ	Ռ.	Կոպ.
Գնուած մոմ եւ խունկ	81	30
Քահանային լուսագին	25	
10 ամսա. ռոճիկ հին գերեզմանատան պահապանին	75	
8 ամ. ռ. նոր գերեզ. պահ.	64	
Գնուած իւղ եկեղեց համար.	70	
Նորոգութեանց եւ շինութ.	1696	64
Սենեակների կառուցման եւ իւղեղէնների	1833	
Ընդունելութիւն Ծ. վարդ. Այվազեանի վերադարձ Զուղայից:	272	50
Այլ եւ այլ ծախքեր	92	25
Գումարն է	4209	69
Կշիռ փոխադրած 1896 թ.	113	36
Գումարն է	4323	5

Ալէքսան Բ. Վարդանեան.